ՀՀ գլխավոր դատախազ
Գ. Կոստանյանին

Դիմումատուներ՝

Հեղինե Հարությունի Պետրոսյանի ներկայացուցիչներ՝
Արթուր Ալբերտի Սաքունց և Արայիկ Միքայելի Զալյան
ք. Վանաձոր Տիգրան Մեծ 59

ԴԻՄՈՒՄ

(պարտավորեցնել նախաքննության մարմնին Հայկ Մովսիսյանին տուժող՝ Հեղինե Պետրոսյանին տուժողի իրավահաջորդ ճանաչելուն)

Սույն գործով դիմումատուն հանդիսանում է ՀՀ զինված ուժերի N զորամասի 5-րդ հրաձգային գումարտակի 13-րդ վաշտի 3-րդ դասակի 2-րդ ջոկի հրաձիգ, նռնակաձիգի օգնական, կոչումով շարքային Հայկ Մովսիսյանի մայրը: Հայկ Մովսիսյանը ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից 3 տարի ազատազրկման դատապարտված, պարտադիր ժամկետային զինվորական ծառայողն էր, որին ԼՂՀ քննչական մեկուսարանի 8-րդ խցում դատապարտվելուց օրեր անց գտել են մահացած վիճակում, իսկ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը ՀՀ գլխավոր դատախազի վերաքննիչ բողոքի հիման վրա կայացրել է արդարացման որոշում:

Սույն գործով ներկայացուցիչներ են հանդիսանում Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) նախագահ Արթուր Սաքունցը[1] և նույն կազմակերպության իրավաբան Արայիկ Զալյանը[2] :

1. Տուժողի մահվան հանգամանքը

1.1.ՀՀ զինված ուժերի N զորամասի 5-րդ հրաձգային գումարտակի 13-րդ վաշտի 3-րդ դասակի 2-րդ ջոկի հրաձիգ, նռնակաձիգի օգնական, կոչումով շարքային Հայկ Մովսիսյանի կողմից զինվորական ծառայության պարտականությունները կատարելուց ժամանակավորապես խուսափելու նպատակով անդամախեղում կատարելու դեպքի առթիվ 2011թ. հուլիսի 7-ին ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով ՀՀ ՊՆ 3-րդ կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ:

1.2.2011թ. հուլիսի 22-ին Հայկ Մովսիսյանին տեղափոխել են ՀՀ «Սովետաշեն» ՔԿՀ, իսկ սեպտեմբերի 10-ին՝ ԼՂՀ «Շուշի» ՔԿՀ:

---

[1] Տես՝ 1-ին կից փաստաթուղթը
[2] Տես՝ 1-ին կից փաստաթուղթը

1.3.2011թ. նոյեմբերի 29-ին Հայկ Մովսիսյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 2-րդ մասով, քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան: 2012թ. նոյեմբերի 20-ի դատավճռով Հայկ Մովսիսյանը նույն հոդվածով մեղավոր է ճանաչվել և դատապարտվել ազատազրկման՝ 3 տարի ժամկետով:

1.4. 2012թ. նոյեմբերի 27-ի լույս 28-ի գիշերը, ԼՂՀ քննչական մեկուսարանի 8-րդ խցում Հայկ Մովսիսյանին գտել են մահացած:

2. Գործի նախապատմությունը

2.1.2012 թվականի նոյեմբերի 28-ին ԼՂՀ գլխավոր դատախազության հատուկ քննչական բաժնում ԼՂՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 12200712 քրեական գործ՝ ԼՂՀ ոստիկանության քրեակատարողական վարչության մեկուսարանի կալանավոր Հայկ Արտավազդի Մովսիսյանի ինքնասպանության դեպքի առթիվ: Հարուցված գործի շրջանակներում, սակայն վարույթն իրականացնող մարմնի կողմից չեն կայացվել Հայկ Մովսիսյանին տուժող, այնուհետև նրա մերձավոր ազգականներից որևէ մեկին տուժողի իրավահաջորդ ճանաչելու մասին որոշումներ:

2.2. 2013թ. ապրիլի 11-ին Հայկ Մովսիսյանի մահից շուրջ 5 ամիս անց ՀՀ գլխավոր դատախազի կողմից ներկայացվել է վերաքննիչ բողոք ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 2012թ. նոյեմբերի 20-ին կայացված Հայկ Մովսիսյանին 3 տարի ազատազրկման դատապարտելու վերաբերյալ կայացված դատավճռի դեմ:

2.3. 2013թ. ապրիլի 16-ին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը քննարկելով ՀՀ գլխավոր դատախազի վերաքննիչ բողոքը կայացրել է որոշում, ՀՀ գլխավոր դատախազի վերաքննիչ բողոքը բավարարելու մասին, ըստ որի Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2012թ. նոյեմբերի 20-ի դատավճիռը՝ քրեական գործով ըստ մեղադրանքի Հայկ Մովսիսյանի ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 2-րդ (դասալքությունը, որը կատարվել է ծառայության համար վստահված զենքով կամ մի խումբ անձանց կողմից) մասով բեկանվել է և Հայկ Մովսիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցանքի կատարման մեջ ճանաչվել է անմեղ հետմահու և արդարացրել՝ հանցակազմի բացակայության հիմքով:

2.4. 2013թ. մարտի 18-ին ԼՂՀ գլխավոր դատախազության հատուկ քննչական բաժնի ՀԿԳ ավագ քննիչի կողմից որոշում է կայացվել թիվ 12200712 քրեական գործի մասը կարճելու վերաբերյալ: Ըստ կայացված որոշման՝ ԼՂՀ գլխավոր դատախազության հատուկ քննչական բաժնում կատարված նախաքննությամբ ձեռք բերված ապացույցներով հիմնավորվել է, որ ԼՂՀ ոստիկանության քրեակատարողական վարչության աշխատակիցների և քննչական մեկուսարանի կալանավորների, ամբաստանյալների, դատապարտյալների կողմից Հայկ Մովսիսյանի նկատմամբ որևէ սպառնալիք, դաժան վերաբերմունք, հոգեբանական ճնշում կամ բռնություն չի գործադրվել, անձնական արժանապատվությունը նվաստացնելուն ուղղված գործողություններ չեն կատարվել, այսինքն՝ նրանց արարքներում բացակայում են

2.12. 2013թ. հուլիսի 16-ին ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը կայացրել է, որոշում ներկայացված դիմումը մերժելու մասին, դատարանը մերժումը հիմնավորել է հետևյալ կերպ.

ՀՀ քրեական օրենսգրքի 103-րդ հոդվածի 1-ին մասի և 290-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների գործողությունների դեմ բողոքը նախ պետք է ներկայացնել դատախազի, իսկ դատախազի կողմից այն չբավարարելու դեպքում նոր միայն կարող է ներկայացնել դատարան:

Դատարանը արձանագրել է, որ Հեղինե Պետրոսյանի կողմից դատարան ներկայացված բողոքը ներկայացվել է քրեադատավարական օրենքով սահմանված կարգի խախտման քանի, որ ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ ավագ քննիչ Մ. Բաբայանի կայացրած որոշումը չի բողոքարկվել վերադաս դատախազին:

2.13. 2013թ. օգոստոսի 16-ին Դիմողը ներկայացրել է դիմում-բողոք ՀՀ գլխավոր դատախազություն պահանջելով վերացնել ՀՀ հատուկ քննչական ծառայության ՀԿԳ քննիչ Մ. Բաբայանի 05.06.2013թ. պահանջի լուծումը հետաձգելու և միջնորդությունը մերժելու վերաբերյալ որոշումը, և պարտավորեցնել վերջինիս իր վարույթում քննվող թիվ 62202513 քրեական գործով Հայկ Մովսիսյանին ճանաչել տուժող, Հեղինե Պետրոսյանին ճանաչել տուժողի իրավահաջորդ:

2.14. 2013թ. սեպտեմբերի 22-ին ՀՀ գլխավոր դատախազության կողմից ստացվել է պատասխան գրություն այն մասին, որ դիմում-բողոքը ներկայացվել է քրեադատավարական օրենքով սահմանված կարգի խախտմամբ քանի, որ համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 100-րդ հոդվածի 3-րդ մասի՝ դիմողը իրավունք ունի իրեն դատավարության մասնակից ճանաչելուց հրաժարվելու կամ այդ պահանջի լուծումը հետաձգելու մասին որոշման պատճենը ստանալուց 5 օրյա ընթացքում համապատասխան մերժումը բողոքարկել դատարան:

Այսինքն՝ դատավարության մասնակից ճանաչելու պահանջի մերժման որոշումները դատախազին բողոքարկման ենթակա չեն:

<u>3. թիվ 62202513 քրեական գործով Հայկ Մովսիսյանին տուժող ճանաչելու վերաբերյալ պնդումներ</u>

Տուժող է ճանաչվում այն անձը, ում քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով անմիջականորեն պատճառվել է բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս:

Տուժող ճանաչելու մասին որոշումն ընդունում է հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը կամ դատարանը /ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, հոդված 58/: Տուժողը, ելնելով իր դատավարական կարգավիճակից, քրեական գործի քննության ընթացքում օգտվում է մի շարք իրավունքներից, որոնց իրացումը ենթադրում է վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը՝ հնարավորություն ընձեռել տուժող կողմին իրականացնել քրեադատավարական օրենսդրությամբ վերապահված իր իրավունքները:

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը նախատեսում է նաև տուժողի իրավահաջորդի ինստիտուտը, որը մահացած կամ իր կամքն արտահայտելու ունակությունը կորցրած տուժողի իրավունքների և շահերի իրացման, ինչպես նաև դրանց պաշտպանության արդյունավետ երաշխիք է: Նշված ինստիտուտի գոյությունը բխում է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով ամրագրված յուրաքանչյուր անձի՝ իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքից:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ տուժողի իրավահաջորդը քրեական գործով վարույթին մասնակցում է տուժողի փոխարեն և կրում է վերջինիս իրավունքները և պարտականությունները, հետևաբար տուժողի իրավահաջորդն օգտվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածով ամրագրված տուժողի իրավունքներից և պարտականություններից:

Տուժողի հասկացության վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանը իր իրավական դիրքորոշումն է հայտնել թիվ ԵԿԴ/0077/11/12 որոշման 25-րդ կետում, ըստ որի քրեական դատավարությունն իրականացվում է ոչ միայն հանցագործությունը բացահայտելու և մեղավորներին քրեական պատասխանատվության ենթարկելու, այլև հանցագործության արդյունքում տուժողի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն ապահովելու նպատակով: Այլ խոսքով՝ տուժողի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ապահովումը հանդիսանում է քրեական դատավարության կարևորագույն խնդիրներից մեկը: Վկայակոչված որոշման 26-րդ կետում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական դատավարության ընթացքին տուժողի (տուժողի իրավահաջորդի) մասնակցությունը մի կողմից անհրաժեշտ նախապայման է վերջինիս իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն ապահովելու համար, մյուս կողմից, նպաստում է քրեական գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտմանը: Քրեական վարույթում անհնար է իրականացնել դատավարական իրավունքներ և պարտականություններ՝ առանց դատավարության մասնակից լինելու, իսկ հանցագործության հետևանքով վնաս կրած անձի դեպքում արդյունավետ մասնակցությունը հնարավոր է միայն վարույթն իրականացնող մարմնի կողմից վերջինիս տուժող ճանաչելու վերաբերյալ որոշում կայացնելուց հետո:

Տուժող ճանաչելու քրեադատավարական կարգին վերաբերող դրույթների համադրված վերլուծության արդյունքում կարելի է եզրահանգել, որ օրենսդիրը նշված դատավարական ակտի կայացման համար անհրաժեշտ նախապայման է համարում հանցագործության արդյունքում անձին բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս պատճառված լինելու կամ այդպիսի վնաս պատճառելու հավանականության հաստատումը, ինչը, սակայն, չի կարող մեկնաբանվել այնպես, որ անձին տուժող ճանաչելու համար անհրաժեշտ լինի հանցակազմի բոլոր տարրերի հաստատում կամ վնաս պատճառելու վերաբերյալ սպառիչ տվյալների հավաքագրում:

Վկայակոչված որոշման 27-րդ կետում, վճռաբեկ դատարանը մեկնաբանելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ եթե իրավասու պաշտոնատար անձը որոշում է կայացնում քրեական գործ հարուցելու մասին, ապա նա ձեռք բերված տվյալները բավարար է համարում

հանցագործության փաստի (հանցակազմի օբյեկտիվ կողմի և օբյեկտի) առկայությունը հաստատված համարելու համար: Իսկ եթե քրեական գործ հարուցելու փուլում հայտնի է դառնում ենթադրյալ հանցագործությունից տուժած անձը, ապա վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է վերջինիս ճանաչել որպես տուժող և ներգրավել գործի քննությանը: Համանման կերպով, քրեական գործ հարուցելու փուլում վարույթն իրականացնող մարմինը մահացած կամ իր կամքն արտահայտելու ունակությունը կորցրած տուժողի մերձավոր ազգականներից մեկին պետք է ճանաչի տուժողի իրավահաջորդ, եթե նա այդպիսի ցանկություն է հայտնել:

Սույն պարագայում արդեն իսկ հարուցված է քրեական գործ, որը ստացել է թիվ 62202513 քրեական գործի հերթական համար:

Վերը վկայակոչված դատական ակտը և պատճառաբանությունները ինքնին հիմք են հարուցված թիվ 62202513 քրեական գործով Հ. Մովսիսյանին տուժող, իսկ Հ. Պետրոսյանին տուժողի իրավահաջորդ ճանաչելու համար:

<u>4. Հեղինե Պետրոսյանին՝ տուժող Հայկ Մովսիսյանի իրավահաջորդ ճանաչելու վերաբերյալ պնդումներ.</u>

Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարանի կողմից կայացված մի շարք վճիռներում սահմանվել է, որ Կոնվենցիայի 8-րդ հոդվածը պետության համար առաջացնում է ոչ միայն նեգատիվ պարտականություններ (ձեռնպահ մնալու համապատասխան ազատություններին միջամտելուց), այլ նաև պոզիտիվ պարտականություններ (inter alia, սահմանելու տուժողների իրավունքների քրեադատավարական պաշտպանության համարժեք կառուցակարգեր):

Մասնավորապես՝ Յանկովիչի վերաբերյալ ՄԻԵԴ վճռի 25-րդ կետում արտահայտել է հետևյալ դիրքորոշումը՝ Խորվաթիայի քրեադատավարական օրենսդրությունը նախատեսում էր տուժողի իրավունքների պաշտպանության մի շարք կառուցակարգեր, այդ թվում՝ սուբսիդիար մեղադրողի գործառույթ իրականացնելու իրավունքը Այնուհանդերձ, Յանկովիչի գործով ՄԻԵԴ-ը գտել է, որ պետությունը չի կատարել իր այդ պոզիտիվ պարտականությունը, քանի որ inter alia, տուժողին իրական հնարավորություն չի տրվել իրականացնելու իր դեմ ոտնձգություն թույլ տված անձի քրեական հետապնդում[3]:

Յանկովիչն ընդդեմ Խորվաթիայի գործով ՄԻԵԴ իրավական դիրքորոշումը սույն գործի փաստերի վրա տարածելով՝ կարող ենք արձանագրել, որ տուժողի իրավահաջորդ չճանաչելով, տուժողին հնարավորություն չի տրվում իրականացնել իր շահերի արդյունավետ պաշտպանություն:

---

3. Տես՝ Յանկովիչի վերաբերյալ ՄԻԵԴ վճռի 57-րդ կետ): Դրա հիման վրա արձանագրվել է Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում (տե՛ս Յանկովիչի վերաբերյալ ՄԻԵԴ վճռի 58-րդ կետ:

5. Նախաքննության մարմնի կողմից Հայկ Մովսիսյանին տուժող, իսկ Հեղինե Պետրոսյանին տուժողի իրավահաջորդ չճանաչելով խախտվում է կողմերի հավասարության սկզբունքը[4]:

5.1. ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական դատավարությունն իրականացվում է մրցակցության սկզբունքի հիման վրա: Նույն հոդվածի 5-րդ և 8-րդ մասերի համաձայն՝ քրեական դատավարությանը մասնակցող կողմերը քրեական դատավարական օրենսդրությամբ օժտված են իրենց դիրքորոշումը պաշտպանելու հավասար հնարավորություններով:

Ըստ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի՝ կողմերի հավասարությունն արդարացի դատական քննության առավել լայն հասկացության բաղկացուցիչ տարրերից է. այն պահանջում է, որպեսզի կողմերից յուրաքանչյուրն ունենա իր գործն այնպիսի պայմաններում ներկայացնելու ողջամիտ հնարավորություն, երբ կողմերից որևէ մեկը հակառակ կողմի նկատմամբ ակնհայտ առավելություն չունի[5] :

Սույն գործի շրջանակներում կողմերը նախաքննության ընթացքում իրենց շահերը պաշտպանում են ոչ իրավահավասար պայմաններում, քանի որ նախաքննության սկզբից մինչ օրս նախաքննության մարմինը իր կամայական դիրքորոշումը պնդելով Հայկ Մովսիսյանին չի ճանաչում տուժող, իսկ նրա մորը տուժողի իրավահաջորդ և նա նախաքննությանը չի մասնակցում որպես քրեական դատավարության սուբյեկտ:

5.2. Քրեական արդարադատության համակարգում տուժողի պահանջմունքները բավարարելու և շահերը պաշտպանելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու պետությունների պարտավորությունը սահմանված է նաև ՄԱԿ-ի 1985 թ. նոյեմբերի 29-ին կայացված «Հանցագործությունների և զոհերի հանդեպ արդարադատության հիմնարար սկզբունքների» 40/34 հռչակագրում, որի 6-րդ կետի համաձայն՝ պետք է աջակցել նրան, որպեսզի դատական և վարչական ընթացակարգերը մեծմասամբ պատասխանեն զոհերի պահանջմունքներին՝ հետևյալ միջոցներով.

ա) զոհերին ինֆորմացիա իրենց դերի և դատական քննարկումների անցկացման ժամկետի, ծավալի և ընթացքի, նրանց գործերի քննության արդյունքների մասին, հատկապես ծանր հանցագործությունների դեպքում, ինչպես նաև այն դեպքերում, երբ նրանք այդպիսի ինֆորմացիա են պահանջել,

դ) զոհերի համար անհարմարությունները նվազագույն հասցնելու, անհրաժեշտության դեպքում՝ նրանց անձնական կյանքի հսկողությունը, նրանց և նրանց

---

4. «զենքերի հավասարությունը»՝ Եվրոպական դատարանի մոտեցումներում, «մրցակցությունը»՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի դիրքորոշումներում:
5. Տես՝ Կրեսն ընդդեմ Ֆրանսիայի 07.06.2001թ., կետ 72:

ԼՂՀ քրեական օրենսգրքի 110-րդ/ինքնասպանության հասցնելը/ և 111-րդ/ ինքնասպանության հակելը/ հոդվածներով նախատեսված հանցակազմերի հատկանիշները:

2.5. Հայկ Մովսիսյանի վերաբերյալ քրեական գործի վարույթն իրականացրած պաշտոնատար անձանց գործողություններին իրավական գնահատական տալու պատճառաբանությամբ 2013 թվականի մարտի 19-ին որոշում է կայացվել քրեական գործը ՀՀ գլխավոր դատախազության միջոցով ՀՀ հատուկ քննչական ծառայություն ուղարկելու մասին:

2.6. 2013թ. մարտի 28-ին ՀՀ հատուկ քննչական ծառայության կողմից որոշում է կայացվել թիվ 12200712 քրեական գործի նյութերով հարուցել նոր թիվ 62202513 քրեական գործը, Հայկ Մովսիսյանի դեմ հարուցված քրեական գործի վարույթն իրականացնող պաշտոնատար անձանց պաշտոնեական անփութության ենթադրյալ դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով:

2.7. 2013թ. մարտի 28-ի թիվ 12200712 քրեական գործը միացվել է թիվ 62202513 քրեական գործին:

2.8. 2013թ. հունիսի 29-ին Դիմողի կողմից դիմում է ներկայացվել ՀՀ գլխավոր դատախազ Ա. Հովսեփյանին, որով խնդրել է «..... պարտավորեցնել վարույթն իրականացնող մարմնին տրամադրելու քրեական գործ հարուցելու մասին որոշումը, ինչպես նաև ճանաչել Հեղինե Պետրոսյանին որպես տուժողի իրավահաջորդ սույն քրեական գործով և ներգրավվել վարույթում»:

2.9. 2013թ. հունիսի 1-ին ՀՀ գլխավոր դատախազության կողմից ստացվել է պատասխան գրություն ըստ որի Դիմողի ներկայացրած դիմումը ուղարկվել է ՀՀ հատուկ քննչական ծառայություն:

2.10. 2013թ. հունիսի 5-ին ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչ Մ.Ա. Բաբայանի կողմից կայացվել է որոշում՝ պահանջի լուծումը հետաձգելու և միջնորդությունը մերժելու վերաբերյալ, պատճառաբանելով հետևյալ կերպ (...) «Հայկ Մովսիսյանի նկատմամբ չի կատարվել ինքնասպանության հասցնելու կամ ինքնասպանության հակելու հանցագործություններ, ուստի նա վերը նշված արարքներից տուժող ճանաչվել չի կարող, իսկ Հեղինե Պետրոսյանն էլ չի կարող ճանաչվել տուժողի իրավահաջորդ: Ինչ վերաբերում է Հայկ Մովսիսյանի վերաբերյալ քրեական գործի վարույթն իրականացնող պաշտոնատար անձանց պաշտոնեական անփութության հետևանքով նրան տուժող ճանաչելուն, ապա թիվ 62202513 քրեական գործով կատարվող նախաքննությամբ դեռևս բավարար ապացույցներ ձեռք չեն բերվել, որ Հայկ Մովսիսյանի վերաբերյալ քրեական գործի վարույթն իրականացնող պաշտոնատար անձանց կողմից կատարվել է ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածով /պաշտոնեական անփութություն/ նախատեսված հանցագործություն, հետևաբար դեռևս չի հաստատվել, որ քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով Հայկ Մովսիսյանին անմիջականորեն պատճառվել է բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս»:

2.11. 2013թ. հունիսի 27-ին Դիմողի կողմից ներկայացվել է դիմում ՀՀ Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարան խնդրելով՝ 2013թ. հունիսի 5-ին ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչ Մ.Ա. Բաբայանի որոշումը վերացնել՝ Հայկ Մովսիսյանին տուժող ճանաչել և իսկ իրեն տուժողի իրավահաջորդ:

ընտանիքի, նրանց կողմի վկաների անվտանգությունը ապահովելու միջոցների ձեռնարկումը,

ե)զոհերին փոխհատուցելու գործերի քննությունը, այդ հարցի վերաբերյալ վճիռների կամ որոշումների կատարման չարդարացված ձգձգումների կանխելը:

Սույն դեպքում հետաքննությունը չի իրականացվել, նախաքննությունն էլ չի իրականացվում հանգամանալից, արդյունավետ անաչառ իսկ քրեական գործի քննությունը հասանելի չէ զոհի ընտանիքի համար:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 58-րդ, 59-րդ 78-րդ, 79-րդ, 80-րդ, 100-րդ, 102-րդ հոդվածները.

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ՝

պարտավորեցնել ՀՀ Հատուկ քննչական ծառայության քննիչ Մ.Ա.Բաբայանին թիվ 62202513 քրեական գործով Հայկ Մովսիսյանին ճանաչել տուժող, իսկ Հեղինե Պետրոսյանին՝ տուժող Հայկ Մովսիսյանի իրավահաջորդ:

Կից ներկայացվում է՝

1. Հ. Պետրոսյանի կողմից Ա. Զալյանի և Ա. Սաքունցին տրված լիազորագրի պատճենը.
2. Ա. Զալյանի և Ա. Սաքունցի անձնագրերի պատճենները:

Դիմողներ՝

Հեղինե Պետրոսյանի ներկայացուցիչներ՝

Ա. Սաքունց

Ա. Զալյան

18. 12. 2013թ.

ԼԻԱԶՈՐԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետություն , քաղաք Երևան
Երկու հազար տասներեք թվականի հունիսի քսանվեցին

Ես , Հայաստանի Հանրապետության քաղաքացի Հեղինե Հարությունի Պետրոսյանս , ծնված 08.03.1972թ.(հազար ինն հարյուր յոթանասուներկու թվականի մարտի ութին) , անձնագիր AN 0481794 տրված 049-ի կողմից 21.05.2013թ. , հաշվառված Հայաստանի Հանրապետություն , քաղաք Հրազդան , Վանատուր թաղ. տուն 552 (հինգ հարյուր հիսուներկու) հասցեում լիազորում եմ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ Արթուր Ալբերտի Սաքունցին , ծնված 22.05.1961թ. (հազար ինն հարյուր վաթսունմեկ թվականի մայիսի քսաներկուսին) , անձնագիր AM 0460612 տրված 018-ի կողմից 05.10.2011թ., հաշվառված Հայաստանի Հանրապետություն , քաղաք Վանաձոր , Գր. Լուսավորիչի 21 (քսանմեկ) շենքի , 23 (քսաներեք) հասցեում և/կամ Արայիկ Միքայելի Զալյանին, ծնված 07.02.1985թ.(հազար ինն հարյուր ութսունհինգ թվականի փետրվարի յոթին) , անձնագիր AF 0384205 տրված 018-ի կողմից 18.12.2001թ., անձնագրի վավերականության ժամկետը երկարաձգված է մինչև 18.12.2016թ. , հաշվառված Հայաստանի Հանրապետություն , քաղաք Վանաձոր Ներսիսյան նրբ. 6 (վեց) շենքի , 40 (քառասուն) հասցեում ՀՀ Քր. դատավարության օրենսգրքով նախատեսված բոլոր իրավունքներով և պարտականություններով ներկայացնել տուժող Հայկ Արտավազդի Մովսիսյանի իրավահաջորդի շահերը, լինել իմ ներկայացուցիչը պետական և ոչ պետական մարմիններում , լինել իմ ներկայացուցիչը բոլոր ատյանների դատարաններում , ՀՀ Քաղ.Դատ.Օր-ի 42 հոդվածի 1-9 կետերով սահմանված բոլոր լիազորություններով, այդ թվում որպես իմ օրինական ներկայացուցիչը իմ անունից հանդես գալ և կատարել անհրաժեշտ գործողություններ քաղաքապետարանում,թաղապետարանում,ԴԱՀԿ ծառայությունում , նոտարական գրասենյակում, քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում, անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում, ինչպես նաև ֆիզիկական անձանց առջև այն բոլոր իրավունքներով, որոնք վերապահված են հայցվորին, պատասխանողին, երրորդ անձին, տուժողին, հանձնել և ստանալ փաստաթղթեր, բողոքարկել և գանգատարկել դատարանի որոշումներն ու վճիռները, կատարել մուծումներ, տալ իմ անունից դիմումներ,ստորագրել հայցադիմումը ,այն հանձնել դատարան , հանձնել արբիտրաժային դատարան, միջնորդություններ կատարել, կնքել հաշտության համաձայնություն, ամբողջովին կամ մասնակի հրաժարվել հայցային պահանջից, հանդես գալ դատական ակտերի կատարման հարկադիր փուլում, բողոքարկել հարկադիր կատարողի գործողությունները և որոշումները, փոխել հայցի առարկան , կամ դրա հիմքը, իմ անունից կատարողական թերթ ներկայացնել և հետ վերցնել , հարկադիր կատարողի գործողությունների դեմ բողոքարկել , ստանալ փաստաթղթեր, ստորագրել իմ փոխարեն և կատարել այն բոլոր գործողությունները որոնք կապված են սույն հանձնարարության հետ:

Ես, վկայում եմ , որ գործունակության մեջ սահմանափակված չեմ , իմ նկատմամբ չկա սահմանված խնամակալություն և հոգաբարձություն : Լիազորագիրը տրված է իմ կողմից կամավոր :

Լիազորագիրը տրված է երեք տարի ժամկետով՝ առանց վերալիազորման իրավունքի :

ԼԻԱԶՈՐՈՂ ---------- Պետրոսյան Հեղինե Հարությունի
Հեղինե Հարությունի
Պետրոսյան

Լիազորագիրը կարդացի

Հայաստանի Հանրապետություն , քաղաք Երևան
Երկու հազար տասներեք թվականի հունիսի քսանվեցին
սույն լիազորագիրը վավերացված է իմ՝ Երևան քաղաքի , Էրեբունի նոտարական տարածքի նոտար՝ ԱՆԱՀԻՏ ՂԱԶԱՐՅԱՆԻ կողմից :
Լիազորագիրը ստորագրված է քաղ. Հեղինե Հարությունի Պետրոսյանի կողմից իմ ներկայությամբ : Լիազորողի ինքնությունը և գործունակությունը ստուգված են :

Գրանցված է սեղանամատյանում N4109
Գանձված է պետ.տուրք և ծառայության վճար , համաձայն
Հայաստանի Հանրապետության ,, Պետական տուրքի մասին ,, և ,,
Նոտարիատի մասին ,,օրենքների

Ն Ո Տ Ա Ր Ա.ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ REPUBLIC OF ARMENIA

ԱԶԳԱՆՈՒՆԸ

ԶԱԼՅԱՆ

ՍԵՌԸ
Ա

ԱՆՈՒՆԸ

ԱՐԱՅԻԿ ՄԻՔԱՅԵԼԻ

ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԾՆՆԴԱՎԱՅՐԸ
07.02.1985

ԾՆՆԴԱՎԱՅՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏՐՎԱԾ Է
18.12.2001

ՎԱՎԵՐԱԿԱՆ Է ՄԻՆՉԵՎ
18.12.2011

ՈՒՄ ԿՈՂՄԻՑ
018

ԱՆՁՆԱԳԻՐ ՏԻՊՈՋ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ /SIGNATURE OF HOLDER

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ REPUBLIC OF ARMENIA

PASSPORT



TYPE
P

COUNTRY CODE
ARM

PASSPORT No.
AF0384205

SURNAME(S)
ZALYAN

NAME
ARAYIK

NATIONALITY REPUBLIC OF ARMENIA

DATE OF BIRTH
07 FEB 1985

PERSONAL No.

SEX
M

PLACE OF BIRTH
REPUBLIC OF ARMENIA

DATE OF ISSUE
18 DEC 2001

DATE OF EXPIRY
18 DEC 2011

AUTHORITY
018

AF0384205

P<ARMZALYAN<<ARAYIK<<<<<<<<<<<<<<<<<<<<<<<<<<<<<<

AF0384205 3ARM8502072M1112186<<<<<<<<<<<<<<<<04

4

ԱՆՁՆԱԳԻՐԸ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
ՎԱՎԵՐԱԿԱՆ Է ՄԻՆՉԵՎ.

THIS PASSPORT IS VALID FOR FOREIGN
COUNTRIES UNTIL:

066
ՎԱՎԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ
[illegible] Է ՄԻՆՉԵՎ
[illegible] EXPIRY
[illegible] UNTIL
«18» 12 20 16 [signature]

ՆՇՈՒՄՆԵՐ · OBSERVATIONS 5

[illegible] 6-40
8 01 2002 [signature]

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՔԱՐՏ

Քարտի համարը **1702850676**

Ազգանունը ՋԱԼՅԱՆ
Անունը ԱՐԱՅԻԿ
Հայրանունը ՄԻՔԱՅԵԼԻ
Տրամադրված է 05 / 09 / 2007
Հիմքը ԱՆՁՆԱԳԻՐ -- AF0384205

AF0384205

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ REPUBLIC OF ARMENIA

ԱԶԳԱՆՈՒՆԸ

ՍԱՔՈՒՆՑ

ՍԵՌԸ

Ա

ԱՆՈՒՆԸ

ԱՐԹՈՒՐ ԱԼԲԵՐՏԻ

ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԾՆՎԱԼ Է
22.05.1961

ԾՆՆԴԱՎԱՅՐԸ
ԱԴՐԲԵՋԱՆ

ՏՐՎԱԼ Է
05.10.2011

ՎԱՎԵՐԱԿԱՆ Է ՄԻՆՉԵՎ
05.10.2021

ՈՒՄ ԿՈՂՄԻՑ
018

ԱՆՁՆԱԳԻՐ ՏԻՐՈՋ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ/SIGNATURE OF HOLDER

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ REPUBLIC OF ARMENIA

PASSPORT

TYPE
P

COUNTRY CODE
ARM

PASSPORT No.
AM0460612

SURNAME(S)
SAKUNTS

NAME
ARTUR

NATIONALITY REPUBLIC OF ARMENIA

DATE OF BIRTH
22 MAY 1961

PERSONAL No.

SEX
M

PLACE OF BIRTH
AZERBAIJAN

DATE OF ISSUE
05 OCT 2011

DATE OF EXPIRY
05 OCT 2021

AUTHORITY
018

P<ARMSAKUNTS<<ARTUR<<<<<<<<<<<<<<<<<<<<<<<<<<<<<<

ԱՆՁՆԱԳԻՐԸ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
ՎԱՎԵՐԱԿԱՆ Է ՄԻՆՉԵՎ

THIS PASSPORT IS VALID FOR FOREIGN
COUNTRIES UNTIL

11.10.2013

018

ՆՇՈՒՄՆԵՐ · OBSERVATIONS